

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՓԱՐԻԶԻ «ԳԱՎՌ»-Ի ՍՐԱՀՈՒՄ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՌԻԹՈՎ (27 մայիսի 1979 թ.)

Այսօր, եկեղեցվո մեջ սուրբ պատարագով մատուցված հոգեհանգստյան արարողութենեն հետո, այստեղ, հարազատներ Մեր, կբերենք ձեզի օրհնություն և ողջույն մեր վերածնած Մայր Երկրեն, Սարդարապատի հաղթանակով ծնունդ առած Հայաստանեն, Սարդարապատը կերտող ձեր հարազատ եղբայրներեն և քույրերեն:

Հայոց պատմությունը ծանոթ է ձեզի: Գիտեք, թե դժբախտ իրադարձություններու հետևանքով, բուն պատմական Հայաստանի հողի վրա հայկական պետությունը կործանեցավ 11-րդ դարուն: Կիլիկյան թագավորությունը կազմավորվեցավ երեք հարյուր տարիներու համար, բայց բուն Հայաստանի հողամասեն հեռու: Բուն հայկական հողամասի վրա մենք ո՛չ պետություն, ո՛չ իշխանություն ունեցանք մոտավորապես հազար տարի: Եվ անավասիկ, հազար տարի հետո, Սարդարապատի ճակատամարտի հաղթանակով վերականգնեցավ կորսված պետությունը Հայոց:

Սարդարապատի ճակատամարտը կղզիացած կատար մը չէ մեր պատմության հորիզոնի վրա: Պետք է երթալ մոտավորապես հարյուր տարի ետ, որպեսզի գտնենք այսօրվան մեր օրերու հայկական պետության ծննդյան և զարգացման ակունքը: Մենք այդ թվականը կնկատենք 1828-ը, որուն հիշատակը տոնախմբվեցավ անցյալ տարի: 150-ամյակը Արևելահայաստանի ազատագրումին պարսկական խավարեն ու դաժան լուծեն և միացումը անոր քրիստոնյա Ռուսաստանին: Այդ թվականը բախտորոշ թվական մը պետք է նկատել մեր նորագույն պատմության մեջ, որու կերտումին մասնակցեցան, հեղինակները եղան, կրնանք ըսել, մեր կաթողիկոսները, հատկապես Ներսես Աշտարակեցի հայրենասեղծ հայրապետը:

Կխորհինք թե այս ճշմարտությունը ամբողջապես հասակ չէ եղած տակավին մեր ժողովուրդի զավակներուն: Մենք չենք կրնար այս պահուն ամբողջ պատմությունը ձեզի ներկայացնել այդ դեպքերուն, բայց իրողությունը այն է, որ 1828-ին, երբ պարսկական լուծեն ազատվելով Արևելա-

հայաստանը միացավ Ռուսաստանին, հիշտ է, ո՛չ ազատ և ո՛չ ալ անկախ դարձավ, բայց մեր ժողովուրդի, ինչպես ըսինք, նորագույն պատմության զարգացման ճանապարհի վրա բախտորոշ դեր կատարեց:

Նախ կուզենք հիշել ձեզի պարագա մը, որ երևի երբեմն կմոռցվի. այն, որ 1828 թվականին, այսօրվա Հայաստանի հողամասի վրա կապրեին միայն 17 հազար հայեր, մնացածը՝ 150 հազարի մոտ, մահմեդականներ էին: Երևակայեցեք ինչ վիճակի հասած էր Արևելահայաստանը: Դարերով կեղեքված, հալածված, նահատակված ու արտագաղթած էր հայ ազգաբնակչությունը: Այդ ժամանակաշրջանին Հայաստան բառը, գոնե Արևելահայաստանի մասին խոսելով, աշխարհագրական հասկացություն մըն էր միայն, որովհետև, իրապես, բնակչության միայն 12—14 տոկոսը հայերե բաղկացած էր:

Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի դերը մեծ եղավ կռիվներու ընթացքին, բայց նաև կռվեն հետո: Իր ջանքերով, հաղթանակեն հետո, ռուսպարսկական հաշտության դաշնագրի մեջ կետ մը արձանագրել տվավ, որ անմիջապես Պարսկաստանի տարբեր շրջաններեն հիսուն հազար հայեր տեղափոխվին Արևելահայաստան: Հայրենասեր կաթողիկոսը ներգաղթեր կազմակերպեց նաև Թրքահայաստանեն, և երեք տարվա ընթացքին հայության թիվը հիսուն հազարով բարձրացուց Հայաստանի հողամասի վրա: Իսկ հաջորդ տասնամյակներուն նույն քաղաքականությունը շարունակվելով միշտ ս. Էջմիածնի ղեկավարությամբ, հայության թիվը հետզհետե աճեցավ և հասավ կես միլիոնի շուրջ, մինչև մեր դարու սկիզբները:

Ահավասիկ ինչպես հիմը դրվեցավ Արևելահայաստանի նորագույն պատմության: Եվ ոչ միայն բնակչությունը հետզհետե աճեցավ, այլ նաև սկիզբ առավ աքանչելի զարթոնքը հայոց հասարակական կյանքի և արևելահայ գրականության, ու նաև եկեղեցական վերակազմակերպման: Մեր գիտակցության մեջ, հայոց նորագույն պատմության հորիզոնի վրա, 1828 թվականով սկսած արևելահայության մշակութային և գրական զարթոնքը, ազատագրական շարժման ծնունդն ու զարգացումը, Սարդարապատի հաղթանակը, հայ պետականության վերականգնումը, մայիս 28-ը և նոյեմբեր 29-ը՝ ուղիղ գծով կգտնվին պատմական զարգացման միևնույն ճանապարհի վրա:

Այս հարցերու առնչությամբ, Մեր կարծիքով, մենք՝ հայերս, այլևս պետք չէ վիճինք: Նոյեմբեր 29-ով փրկվեցավ այն, ինչ որ շահած էինք Սարդարապատով: Սա կենսական կարևորություն ունեցող ճշմարտություն մըն է: Նոյեմբեր 29-ն է, որ պատռեց սև դաշնագիրը Ալեքսանդրապոլի, դուրս վտարեց Քարա-Պեքիր փաշայի զորքերը Հայաստանեն և վերջնականապես ամրացուց հիմքերը նորաստեղծ հայ պետության՝ անվտանգության, խաղաղության և անանխընթաց զարգացումի և վերաշինության պայմաններու մեջ:

Վիճելի հարցեր կրնան ըլլալ. բոլոր ժողովուրդներու պատմության մեջ կարևոր թվականներ, իրադարձություններ, հաճախ վեճի առարկա կդառնան. պետք է թողունք պատմաբաններուն և ժամանակին: Օրինակ մը բերենք ձեր երկրեն՝ Ֆրանսայեն: Կան պատմաբաններ, որոնք ֆրանսական մեծ հեղափոխության մասին տարբեր կարծիքներ ունին: Օրինակի համար, ռումանացի հայտնի հայասեր պատմաբան Պրոֆ. Նիկոլա Յորգան, որ ամեն տարի կհրավիրվեր Սորբոնի համալսարան դասախոսելու, բոլորովին ուրիշ տեսակետ ուներ ֆրանսական հեղափոխության

մասին՝ գտնելով զայն ո՛չ բնական և ո՛չ ալ անհրաժեշտ երևույթ։ Մեր պարագային մեզ համար էականը այն է, որ այ՛ս զարգացման ուղիղ գծով մենք հասանք և կանք այսօր մեր հայրենի վերածննդյան իրականության առջև, որ կներկայացնե ներկա պայմաններուն մեջ հավիտենական Հայաստանը։

Բոլոր հայերուս առջև, թե՛ հայաստանցիներու և թե՛ արտասահմանի հայության, հարց կդրվի. ի՞նչ իմաստ պետք է տանք մենք այսօր Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարա-Քիլիսեի հաղթանակներուն։ Ի միջի այլոց, այստեղ փակագծի մեջ ըսենք, որ նույնքան կարևորություն և նշանակություն ունեցան նաև այդ մյուս երկու ճակատամարտները, մանավանդ Բաշ-Ապարանինը։ Եվ այս առիթով կուզենք ձեզի ավետել, որ այս օրերուն Երևանեն ոչ հեռու, կկառուցվի հուշարձան մը ևս ի հիշատակ Բաշ-Ապարանի հերոսներուն և զոհվածներուն։

Ուրեմն հարց տանք, թե ի՞նչ է մեր հարգանքի տուրքը Սարդարապատի հերոսներուն հանդեպ։ Չի բավեր անշուշտ միայն ոգեկոչել անոնց հիշատակը աղոթքներով կամ գեղեցիկ ճառերով, այլ մանավանդ մեր հայրենաշեն կենդանի գործերով։ Մեր այսօրվա ազգային կյանքի մեջ ամուր տեղ պետք է գրավե նույն Սարդարապատյան ոգին։ Երբեմն թերացումներ կըլլան մեր մեջ այդ տեսակետեն, մանավանդ արտասահմանի տարածքի վրա։ Կմոռնանք հաճախ, որ Եղեռնը կաթիլ-կաթիլ կշարունակվի տակավին։ Ահա այս իրավիճակին մենք պետք է հակադրվինք Սարդարապատի ոգիով, ամեն հնարավոր միջոցներով։ Անկարելին պետք է ի գործ դնենք, որպեսզի պահենք, պահպանենք ինքնությունը, անբաժանությունը, միասնությունը մեր համայն ազգին ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի։

Եվ տակավին ի՞նչ պետք է ակնկալենք մեր ժողովուրդեն։

Նախ, Մեր կարծիքով, ամենաէականը պետք է նկատել առավել աճեցնելը այսօրվա Հայաստանի հայ ազգաբնակչության։ Պարտավոր ենք Հայաստանը հետզհետե աճեցնել և հետզհետե շատցնել մեր ժողովուրդի թիվը այնտեղ։ 1915—1916 թվականներուն կես միլիոնի շուրջ հայություն կար այսօրվա Հայաստանի հողի վրա, որուն վրա ավելցավ գաղթականությունը Վասպուրականի, Ալաշկերտի, Մշո շրջաններեն՝ շուրջ 200 հազար։ Այսպիսով 1920-ին մեր հայրենիքի սահմաններուն մեջ հազիվ 750 հազար հայեր կային մոտավորապես։ Այսօր երեք միլիոն եղանք, և ամեն տարի 60 հազար երեխաներ կծնին Հայաստանի մեջ։ Ահա հուսադրիչ իրողություններ։

Սակայն նաև պետք է ցավ հայտնել վերջին տարիներու արտագաղթի նկատմամբ։ Գիտենք, միջազգային համաձայնություններ և ըմբռնումներ կան։ Մենք համաձայն ենք այդ սկզբունքներուն, որ ամեն մարդ աշխարհի վրա ուր որ ուզե, կարողանա գաղթել, սակայն բացի հայերեն։ Մենք Եղեռն տեսած ժողովուրդ ենք։

Քանի մը տարի առաջ, երբ մեր վարչապետի մոտ էինք, մեր ընթացիկ եկեղեցական հարցերը քննարկելե հետո, ան իր սեղանի վրա դրված քարտեզը ցույց տվավ և խոսեցավ ծրագիրներու մասին, որոնցմով կնախատեսվին մեծածավալ համալիրներ՝ նպատակ ունենալով ապահովել աշխատանք ու նոր բնակավայրեր, և այսպեսով աճեցնել Հայաստանի բնակչության թիվը։ Մեծարգո վարչապետի հաշվումներով, այսօրվան Հայաստանի հողամասը հառաջիկա 30 տարիներու ընթացքին, կրնա շուրջ 7 միլիոն բնակչություն ապրեցնել։

Կկամենանք հիշել նաև մեր ազգային մշակույթի զարգացման պարագան Հայաստանի մեջ և, հնարավոր չափով, նաև արտասահմանի մեջ: Մեզի համար, մեր ժողովուրդի համար, մեր լեզուն, մեր գրականությունը, մեր արվեստը, մեր դպրությունը կենսական նշանակություն ունին: Եվ ամեն անգամ, երբ հայ լեզուն ինչ-ինչ վտանգներու տակ կգտնվի, մեր ժողովուրդը մեկ մարդու պես կպաշտպանե իր մայրենի լեզուն, ինչպես իր հայրենի հողը:

Հայաստանի մեջ, փառք Աստուծո, մենք այդ տեսակետեն պարծենալու շատ տվյալներ ունինք: Չենք ուզեր անուններ հիշել, դուք բոլորդ ծանոթ եք աշխարհին հայտնի այդ անուններուն: Մեկ անուն հիշենք միայն, որպես խորհրդանշական անուն մեր օրերու հայ գիտության և մշակույթի մակարդակի՝ ակադեմիկոս, աստղագետ Վիկտոր Համբարձումյանի անունը, որ պարծանքն է և հպարտությունը հայության, իբրև երկրորդ Անանիա Շիրակացի:

Շարունակելով Մեր մտածումը, Մենք անհրաժեշտ կգտնենք, ինչպես նախորդ խոսողներն ալ ընդգծեցին, հետզհետե զորացնել հայկական միասնությունը, վեր ամեն տեսակ գաղափարական, դասակարգային կամ այլևայլ բաժանումներե կամ տարակարծություններե, հիմնական նպատակ ունենալով Սարդարապատի ոգիի պահպանումով զարգացնել, ամրացնել մեր արդի վերածնած երկիրը՝ մեր այսօրվան ապրող ու ծաղկող Մայր Հայաստանը:

Այս տեսակետեն հուսախաբություններ կունենայինք անցյալի մեջ, բայց մեր օրերուն տակավ կպայծառանա մթնոլորտը, և՝ բոլոր հայերը կսկսին անդրադառնալ և զգալ անհրաժեշտությունը ներքին միասնության, վերածնած հայրենիքի գերագույն շահերու վեմին վրա: Իսկ վերջերս, ծանր հարվածը լիբանանահայության, արթնցուց հայ ժողովուրդի խիղճը ամեն տեղ, մանավանդ Հայաստանի մեջ, զարմանալի կերպով: Մենք, որ քսան և ավելի տարի է այնտեղ կապրինք, չէինք կարծեր, որ հայաստանցի ժողովուրդը այդքան իր սրտին մոտ պիտի ընդուներ դժբախտ պատահարները Բեյրութի: Բոլորի բերանեն՝ գյուղացիներեն, բանվորներեն, մտավորականներեն և ուսանողութենեն կլսվեին. «Նորի՞ց եղեռն, նորի՞ց կոտորած, նորի՞ց որբեր»: Այս ցույց տվավ Մեզի երկու բան. թե ինչքան խորունկ, ինչքան ծանր նստվածք թողած է 1915-ի ցեղասպանության անավոր հիշատակը մեր ժողովուրդի ենթագիտակցության մեջ այսօր ալ տակավին: Եվ երկրորդ, գուցե ավելի կարևորը և այժմեականը, բացահայտումն է հայ ժողովուրդի միասնության ոգիին: Այդ օրերուն բոլոր հայաստանցիները շատ հուզված էին: Պարզ մարդիկ, գյուղացի կանայք, տարբեր շրջաններեն Էջմիածին կուգային որբ փնտրելու, թե Լիբանանեն որբեր եկեր են՝ որդեգրենք, մեղք են, փրկենք մեր զոհված եղբայրներուն երեխաները: Նաև տասնյակ, հարյուրավոր նամակներ, հեռախոսներ՝ նույն աղերսով: Այսպիսի ցնցող ազդեցություն գործեցին Լիբանանի դեպքերը Հայաստանի հայության վրա: Հավատացեք, հայաստանցի հայը բնավ չի հետաքրքրվիր ձեր ներքին վեճերով, ձեր ներքին թերություններով: Հայաստանցին կուզե, որ արտասահմանի հայությունը մեկ սիրտ, մեկ հոգի ըլլա և չմոռնա իր մայր երկիրը, չմոռնա իր մայրենի լեզուն, չմոռնա Սարդարապատի հայրենաստեղծ ոգին:

Ամեն անգամ, երբ մենք հայերս ճակատագրական պահի մը, իրադարձության մը կամ վտանգի մը առջև գտնվինք այստեղ կամ այնտեղ,

Սարդարապատի ոգին է, որ պետք է արթննա մեր մեջ, որպեսզի մենք չշեղինք մեր պատմության, մեր ժողովուրդի զարգացման ուղիղ ճանապարհեն: Սարդարապատի հաղթանակը երեկվան, այսօրվան համար չէ միայն, այլ բոլոր հնարավոր Հայաստաններու համար է այժմ և հավիտյան:

Անհավասիկ խոհերը զոր կունենանք Մենք այս պահուն, երբ կոգեկոչենք Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարա-Քիլիսեի ճակատամարտները և մեր հերոսներու հիշատակը, որոնք իրենց արյունը նվիրաբերեցին, որպեսզի մեր ժողովուրդը պահպանե իր ինքնությունը, իր մայր հողը և իր ազատությունը:

Կմնա մեզի այսօր այս լույսի տակ տեսնել ոչ միայն անցյալի պատմական զարգացումը, այլ նաև՝ ապագայի: Մենք վերածնած ժողովուրդ ենք, տակավին ըսելիք խոսք ունինք և համոզված ենք ու կհավատանք, թե մեր բոլոր արդար իղձերը օր մը պիտի իրականանան:

Հարգա՜նք և օրհնությո՜ւն և լո՜ւյս Սարդարապատի հերոսներու հիշատակին:

Օրհնությո՜ւն և լո՜ւյս վերածնած Մայր Հայրենիքին, յուր քաջ որդվոց սուրբ արյունով կերտված արդի Հայաստանին:

Փա՜ռք և պատի՜վ և օրհնությո՜ւն մեր ժողովուրդին և անոր ավելի պայծառ գալիքին: